

«Ներդաշնակ հասարակություն»

Սոցիալական աշխատողների ասոցիացիա, ՀԿ



"HARMONIC SOCIETY"  
ARMENIAN ASSOCIATION OF SOCIAL WORKERS

«ՆԵՐԴԱՇՆԱԿ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ»  
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՅԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՅԻԱ

**2012-2013թթ.  
գործունեության  
հաշվետվություն**



## Առաջաբան

«Ներդաշնակ հասարակություն» սոցիալական աշխատողների ասոցիացիա, ՀԿ-ն 2012-13 թթ. հաշվետու ժամանակահատվածում շարունակել է իր գործունեությունն՝ առաքելության հիմնական ուղղություններին համապատասխան:

Դրանք 3-ն են՝

1. Ծառայությունների տրամադրում ասոցիացիայի լիիրավ և համակիր անդամներին
2. Մասնագիտության ադվոկացիա և մասնագետների շահերի պաշտպանություն
3. Սոցիալական քաղաքականության բարելավումներին ուղղված ջանքեր

**Բաժին 1. Ծառայությունների տրամադրում ասոցիացիայի անդամներին՝ լիիրավ և համակիր**

Կարևոր է ի սկզբանե նշել, որ ասոցիացիայի կողմից համակիր և լիիրավ անդամներին տրամադրվող ծառայությունների միջև տարբերություն գրեթե չկա, այն առումով, որ թե՛ մեկ և թե՛ մյուս տիպի անդամները հաջողությամբ կարող են դիմել կազմակերպությանն իրենց հուզող այն հարցերով, որոնք դժվարություններ են առաջացնում իրենց պրակտիկ գործունեության մեջ:



«Ներդաշնակ Հասարակություն» Սոցիալական Աշխատողների Սոցիալիստ

Ընդհանուր առմամբ դիմել են 74 մասնագետներ՝ աջակցություն և, հիմնականում, տեղեկատվություն ստանալու նպատակով: Անհրաժեշտ է նշել, որ հարցերի մեծ մասը վերաբերում էր ինտեգրված սոցիալական ծառայությունների նոր մոդելի ներդրման հետ կապված իրենց նոր դերի, գործառույթների, համակարգի փոփոխություններին: Մասնագետները պարզաբանումներ էին խնդրում նաև նոր համակարգի հետ կապված գործատուների՝ իրենց առաջադրվող պահանջներում հնարավոր փոփոխությունների վերաբերյալ, ըստ այդմ ցանկանում էին հասկանալ հնարավոր կրթական պահանջների փոփոխությունները և այն: Հաշվի առնելով մեծ հետաքրքրությունը՝ վարչությունը որոշում ընդունեց մեկնել մարզեր, հանդիպել պետական և ոչ պետական սոցիալական ծառայությունների ներկայացուցիչների հետ և պարզաբանումներ կատարել նրանց բոլորի համար: Կազմակերպչական հարցերում մեծ աջակցություն ցուցաբերեց վարչության անդամ, ԱՍՀՆ վարչության պետ Ա. Մինասյանը և անձամբ մասնակցեց մի քանի հավաքների: Իրազեկման նման նախաձեռնությունը բավականաչափ կարևոր է մասնագետների համար՝ գտնելու իրենց հուզող հարցերի պատասխանը: Հավաքներին հրավիրվում էին սոցիալական ոլորտում ակտիվ տեղի բոլոր մասնագետները՝ անկախ նրանից՝ անդամակցում են ասոցիացիային, թե ոչ, իսկ ասոցիացիայի անդամների համար հանդիպման ավարտին կազմակերպվում էր խորհրդատվություն, որոշ ունկնդիրներ էլ իրենց հանդիպած բարդ դեպքերի կապակցությամբ ստացան սուպերվիզիոն աջակցություն:



«Ներդաշնակ Հասարակություն» Սոցիալական Աշխատողների Սոցիալիստական

## Բաժին 2. Մասնագիտության ադվոկացիա և մասնագետների շահերի պաշտպանություն

Այս ուղղությամբ աշխատանքը հաշվետու ժամանակահատվածում հիմնականում նվիրված է եղել «Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխությունների առաջարկի մշակմանը՝ հաշվի առնելով, որ ՀՀ-ում սոցիալական աշխատանքը և սոցիալական աշխատանքի մասնագետի գործունեությունը կարգավորվում են այդ օրենքով:

Մեզ անհրաժեշտ եղավ գտնել այն հիմնավորումը, որը թույլ կտա որոշումներ ընդունողներին հավաստիանալու օրենքում փոփոխություններ անելու անհրաժեշտության մեջ: Այդ նպատակով բերվել են հետևյալ հիմնավորումները.

ՀՀ-ում բնակչության խոցելի խմբերին ուղղված սոցիալական աջակցության ձևերը և ընդհանուր առմամբ ներկայիս գործող համակարգը ձևավորվել է հայտնի մի շարք իրադարձությունների արդյունքում, որի հիման վրա էլ ձևավորվել է սոցիալական աշխատանքի ինստիտուտը երկրում: Դրանցից առաջինը Խորհրդային Միության կազմալուծումն էր, ինչը հանգեցրեց սոցիալական պաշտպանության գոյություն ունեցող համակարգի փլուզմանը: Ի լրումն, Ղարաբաղյան պատերազմը, երկրաշարժը, երկրում փախստականների աճը, աղքատության խորացումը և այլ գործոններ սոցիալական պաշտպանության տեսանկյունից լուրջ մարտահրավերներ առաջադրեցին նորանկախ պետությանը:

Մարտահրավերները վերաբերում էին սոցիալական պաշտպանության հետևյալ երեք առանցքային հիմնախնդիրներին.



«Ներդաշնակ Հասարակություն» Սոցիալական Աշխատողների Սոցիալիստական

1. Ինչպե՞ս օգնել հանկարծահաս աղքատության ճիւղաններում հայտնված բնակչությանը
2. Ինչպիսի՞ օրենսդրական և գաղափարական հենքերի վրա կառուցել նորանկախ երկրում բնակչության սոցիալական պաշտպանության հայեցակարգը
3. Մասնագիտական ինչպիսի՞ ռեսուրսների միջոցով իրագործել բնակչությանն օգնելու գործընթացը:

Ի պատասխան այդ մարտահրավերների՝ կառավարությունը մշակեց արագ արձագանքման որոշ մեխանիզմներ, որոնք թույլ տվեցին երկրում ծավալել սոցիալական օգնության տրամադրման մասշտաբային գործընթաց: Վերջինս իրագործվեց այդ շրջանում երկրում առկա մասնագիտական ուժերով (բժիշկներ, մանկավարժներ, իրավաբաններ և այլն)՝ միաժամանակ որոնելով ուղիներ սոցիալական պաշտպանության համակարգի արդյունավետ գործառնման համար:

Որպես բնակչության որոշակի խմբերին աջակցելու մեխանիզմ՝ 1993թ.-ին ներդրվեց «Փարոսի» (հետագայում՝ «Աղքատության ընտանեկան նպաստի») համակարգը, որն իր բնույթով նորարարական էր և արդյունավետ. այն հետագայում ՀԲ-ի կողմից ճանաչվեց որպես աննախադեպ և արդյունավետ համակարգ: Այս մեխանիզմը թույլ էր տալիս կազմակերպել բնակչության առավել աղքատ համարվող խմբերին հումանիտար և դրամական օգնության բաշխումը: Այդ նույն շրջանում աջակցության տրամադրման մի ստվար մասը սկսվեց իրագործվել հախուռն կերպով ասպարեզ մտած բարեգործական և կամավորական հատվածների միջոցով: Այսպիսով, պետական և բարեգործական հատվածների կողմից տրամադրվող հումանիտար օգնությունը թույլ տվեց կարգավորել այդ փուլում բնակչության գոյատևման



«Ներդաշնակ Հասարակություն» Սոցիալական Աշխատողների Սոցիալիստական Կոնգրեսի Առաջին Սեյմի Կազմակերպչական Վերաբերյալ

Խնդիրները: 2005թ.-ին ընդունվեց սոցիալական աջակցության մասին առաջին օրենքը, որը կարգավորում է սոցիալական աջակցության նպատակը, խնդիրները, աջակցության տրամադրման ձևերը և այլն, և, ըստ էության, արտացոլում սոցիալական աշխատանքի՝ արդեն կյանք մտած բաղադրիչների էությունը: Քանի որ սոցիալական աշխատանքը այն հիմնական համակարգերից է, որոնք կոչված են իրականացնելու բնակչության սոցիալական պաշտպանությունը, այն պետք է ուղիղ հարաբերի խոցելի խմբերին առնչվող այլ համակարգերի հետ: Մյուս խնդիրն այն է, որ պետք է կապ ստեղծվի սոցիալական աշխատանքի կրթության և պրակտիկայի միջև այնպես, որ սոցիալական աշխատանքի կրթությունը արձագանքի պրակտիկայի պահանջներին:

Հետևաբար, ժամանակն է մտածել սոցիալական պաշտպանությամբ զբաղվող մասնագետներին առաջադրվող չափանիշների վերանայման մասին: Վերոգրյալը նշանակում է փոփոխություններ կատարել համակարգում, ընթացակարգերում, հետևաբար, նաև սոցիալական աջակցության մասին օրենքում, իսկ այդ փոփոխությունները հնարավոր չէ իրագործել առանց սոցիալական մասնագետների, մարդկային ռեսուրսների զարգացման և կրթական պահանջների վերանայման: Այս հիմնավորումը գրեթե առանց փոփոխությունների ներառվեց օրենքի փոփոխությունների առաջարկում, որին կցվեցին նաև առաջարկությունները: Առաջարկությունների օրինակները ներկայացված են նաև Ձեր թղթապանակներում:



«Ներդաշնակ Հասարակություն» Սոցիալական Աշխատողների Սոցիալիստ

Այնուհետև ավելի շատ կողմնակիցներ ձեռք բերելու նպատակով հրավիրվել են առանձին հանդիպումներ մասնագիտական շրջանակների հետ և «կլոր սեղան» քննարկում ԵՊՀ Պայանների դահլիճում:

Այդ ադվոկացիոն հանդիպումների կազմակերպելը նշանակում էր հետևողականորեն շարունակել դեռևս նախորդ հաշվետու ժամանակահատվածում սկսված աշխատանքները:

Կլոր սեղանը հետապնդում է մեկ նպատակ՝ ծավալել մասնագիտական երկխոսություն սոցիալական աշխատանքի ինստիտուտի կայացման համար անհրաժեշտ այն ջանքերի և քայլերի մասին, որոնք պետք է գործադրվեն հիմնական դերակատարների՝ պետության, ակադեմիական շրջանակների, մասնագիտական ասոցիացիայի և պրակտիկ աշխատողների կողմից: Ուստի կլոր սեղանի շուրջ հրավիրված են ներկայացուցիչներ բոլոր առնչվող կառույցներից, ասոյաններից և ծառայություններից:

«Կլոր սեղան» անդրադարձավ հետևյալ խնդիրներին՝

1. Պրակտիկ դաշտում գործող մասնագետներին առաջադրվող պահանջների և մասնագետների պատրաստման ակադեմիական ծրագրերի համապատասխանեցման հարցը



«Ներդաշնակ Հասարակություն» Սոցիալական Աշխատողների Սոցիալիստական

2. Մասնագիտական գործունեություն իրականացնելու համար գիտելիքների և պրակտիկ հմտությունների համապատասխան չափանիշների առաջադրման անհրաժեշտության հարցը
3. Սոցիալական աշխատողի կարգավիճակի, գործառույթներով պայմանավորված աստիճանակարգման, դրանից բխող մանդատի և հասարակական ակնկալիքների համապատասխանեցման հարցը
4. Սոցիալական աշխատանքում էթիկական սկզբունքների ամրագրման հարցը:

Կլոր սեղանը հնարավորություն տվեց հանրնդհանուր համաձայնության գալ ՀՀ-ում սոցիալական աշխատանքի դպրոցի սեփական դեմքի հարցում: Դատողություններն ամփոփվեցին հետևյալ դրույթներում.

- Անցյալ դարի վերջին 2 տասնամյակներին տեղի ունեցած մասշտաբային փոփոխությունները՝ անկախության ձեռքբերումը, ԽՍՀՄ փլուզումը, տնտեսական անկումը և, ըստ այդմ, գաղափարախոսությունների փոփոխություններն առաջ բերեցին արմատական փոփոխություններ մարդկանց ընկալումներում. փորձեր արվեցին մեզ շրջապատող իրականության մասին ստեղծել նոր, ավելի ադեկվատ պատկեր: Կարելի է ասել, որ տեղի ունեցած փոփոխությունների արդյունք է հանդիսանում այնպիսի մասնագիտության ստեղծումը, ինչպիսին է սոցիալական աշխատանքը:
- Որպես Հայաստանում յուրահատուկ մասնագիտություն՝ սոցիալական աշխատանքը գլխավորապես ձևավորվել է մի կողմից մարդկանց օգնելու





«Ներդաշնակ Հասարակություն» Սոցիալական Աշխատողների Սոցիալիստական

գործընթացները կազմակերպված վարելու անհրաժեշտության գիտակցման, և մյուս կողմից, մարդու իրավունքի փիլիսոփայության հիման վրա: Ըստ այդմ, սոցիալական աշխատանքի մասնագիտությունը և սոցիալական աշխատողների հանրությունը անմիջական հարաբերությունների մեջ են պետության և ակադեմիական շրջանակների հետ:

- Պետության կողմից շարունակական ջանքեր են գործադրվում սոցիալական մասնագետների գործունեությունը դարձնելու առավել կազմակերպված, վերահսկելի և ստանդարտացված: Ինչ վերաբերում է մարդու իրավունքի գաղափարին, ապա այն ամրագրվել է սոցիալական մասնագետների պատրաստման համակարգում, սակայն իր արտացոլումը չի գտել դեռևս մասնագիտական գործունեության մեջ:

- Արևմուտքում սոցիալական աշխատողների ձեռքբերումների և թերացումների մասին մենք լսում ենք նախարարներից, պետական այրերից, ԶԼՄ-ներից, ոստիկանությունից, սոցիալական ծառայություններ սպառողներից և հենց սոցիալական աշխատողներից: Ըստ էության, տվյալ մասնագիտությունն ունի տարբեր բնույթներ, որոնք մի կողմից սահմանում են դրա անհրաժեշտությունը, իսկ մյուս կողմից գոյություն ունի ներքին հակասություն, որը ցույց է տալիս դրա բացասական գնահատականը:

- Հասարակական գիտակցությունը հաճախ ունի այնպիսի պատկերացումներ, որոնք չէին համապատասխանում իրականությանը, սակայն, միևնույն ժամանակ, դրանք ունենին երկարատև կյանք: Հաճախ կարելի է հանդիպել այնպիսի կարծիքի, ըստ որի սոցիալական աշխատանքը կրոնական բարեգործության ժամանակակից ձև է, որի արմատներն ունեն դարերի պատմություն: Իրականում բարեգործության և



«Ներդաշնակ Հասարակություն» Սոցիալական Աշխատողների Սոցիալիստական

սոցիալական աշխատանքի միջև ընդհանրությունը նրանում է, որ երկուսն էլ կիրառում են այլընտրանքային մեխանիզմներ, սակայն հետապնդում են տարբեր նպատակներ:

- Ժամանակակից սոցիալական աշխատողի խնդիրն է՝ օգնել այցելուին, որպեսզի նա ինքը կարողանա իրեն օգնել առանց սոցիալական աշխատողի միջամտության, այլ խոսքով, նպատակը մարդուն օգնելն է՝ ձեռքբերելու ինքնաբավություն և ինքնուրույնություն: Այսինքն, մասնագիտական հաջողության համար այն կարևոր հիմք է հանդիսանում: Տվյալ գործընթացը տարբեր կերպ են անվանում՝ ռեաբիլիտացիա, նորմալիզացիա, ռեադապտացիա: Սակայն կարևոր նպատակ է հանդիսանում վերադարձնել «այցելուին» տարբեր սոցիալական իրավիճակներում ինքնուրույն գործելու կարողությունը: Սոցիալական աշխատանքում կենտրոնական դերը պատկանում է այցելուին, իսկ նպատակը՝ ազատել նրան պահանջներից և սոցիալական աշխատողների ծառայությունների հանդեպ կարիքից:

- Մյուս ճանապարհը, որը թույլ կտա տեսնել սոցիալական աշխատանքի յուրահատկությունը բարեգործության, կրոնի հետ համեմատ, նրա մասնագիտական գործունեությունն է: Ըստ ժամանակակից նշանակության՝ «մասնագիտություն» հասկացությունը ենթադրում է որոշակի խնդիրների և հնարքների շղթա, որոնց օգնությամբ կարելի է այդ խնդիրները հայտնաբերել և լուծել: Այսպիսով, յուրաքանչյուր մասնագիտություն ունի յուրահատուկ գիտելիքների համակարգ՝ թե՛ տեսական, թե՛ պրակտիկ բնույթի: Բացի այդ, յուրաքանչյուր մասնագիտություն ունի



«Ներդաշնակ Հասարակություն» Սոցիալական Աշխատողների Սոցիալիստական

իրեն հատուկ սկզբունքների համակարգ, որի միջոցով նրանք կարողանում են «ճիշտ» հաղորդակցվել այցելուի, գործընկերների և արտաքին միջավայրի հետ:

- Մասնագիտական գործունեության համար գիտելիքները, կարողությունները, հասկացությունները և նորմերը փոխանցվում են սերնդեսերունդ՝ մասնագիտական պատարաստվածության համակարգի միջոցով: Մասնագիտական երկարատևությունն, առաջին հերթին, կապված է նրա հետ, թե որքանով է այն կարողանում սահմանափակ ռեսուրսների պայմաններում արդյունավետ կերպով լուծել յուրահատուկ առաջադրանքները:

Այնուհետև, 2012թ.-ի նոյեմբերի 4-ին հրավիրվեց կոնֆերանս, որին մասնակցում էին մոտ 250 մասնագետներ սոցիալական ոլորտի գրեթե բոլոր ոլորտներից: Կոնֆերանսի նպատակն էր՝

- Շնորհավորել ոլորտի ներկայացուցիչներին՝ մասնագիտական տոնի առթիվ: Մասնագիտական օրվա առիթը օգտագործել՝ բարձրացնելու մասնագիտության վարկանիշը, քաջալերելու մասնագետներին՝ իրենց գործին հավատարիմ լինելու, երկրում տեղի ունեցող բարեփոխումներում իրենց գործադրած ջանքերի համար:
- Ճանաչողական տեղեկատվություն փոխանցել ներկաներին՝ Հայաստանում սոցիալական աշխատանքի մասնագիտության պրակտիկայի և մասնագետների կրթության կազմակերպման անցած փուլերի, առկա խնդիրների մասին:



«Ներդաշնակ Հասարակություն» *Սոցիալական Աշխատողների Ասոցիացիա*

- Իրագեկել սոցիալական ոլորտի ներկա արմատական ռեֆորմների մասին՝ կենսաթոշակային, երեխաների դե-ինստիտուցիոնալիզացիա և ծառայությունների ինտեգրում:
- Իրագեկել մասնագետներին մասնագիտության առջև կայացած խնդիրների մասին:
- Վեր հանել ոլորտի ներկայացուցիչներին հուզող բազմաթիվ հարցեր, որոնց լուծումից է կախված մասնագիտության ապագան և, որ ամենակարևորն է, մարդկանց որակյալ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ համապատասխան հարթության ձևավորումը:

Սույն հաշվետվությանը կցվում է սեկցիաների աշխատանքների ամփոփումը:

Ինչ վերաբերում է սոցիալական աշխատողների աշխատանքային պայմանների վերաբերյալ չափորոշիչների սահմանմանը, ապա փոխնախագահ Սյուզաննա Ջուհարյանի ղեկավարած խումբը տքնաջան աշխատանք է տարել՝ կազմելու այդ չափորոշիչների նախնական տարբերակը, որը քննարկման է դրվել կոնֆերանսի ժամանակ: Կցվում է հաշվետվությանը, քանի որ այն անհնար է համառոտագրել: Էթիկայի հանձնաժողովը, տիկին Մինասյանի գլխավորությամբ, վերանայել է էթիկական կոդեքսը, որը կցվում է հաշվետվությանը՝ նույնպես համառոտագրելու դժվարությունից ելնելով: Այն ներկայացվել է կոնֆերանսի և ընդհանուր ժողովի քննարկմանը:



### Բաժին 3. Սոցիալական քաղաքականության բարելավումներին ուղղված ջանքեր

Ասոցիացիայի փորձագետների խումբը 2012-13թթ.-ին շարունակել է աշխատանքը ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ֆինանսավորմամբ «Համալիր սոցիալական ծառայությունների տրամադրման համար սոցիալական ծառայությունների և կառուցվածքային-գործառնական մոդելի միասնական փաթեթի մշակում ՀՀ բնակչության սոցիալական պաշտպանության ոլորտի խորհրդավական ծառայությունների տրամադրման» ծրագրով: Այս երկու տարիների աշխատանքը ուղղված է եղել առաջարկված մոդելի ներդրման աջակցությանը, մասնավորապես դեպք վարողների ինստիտուտի զարգացմանն աջակցելը և ինտեգրված սոցիալական ծառայությունների աշխատակիցների գանգվածային վերապատրաստումների իրականացումը:

Ասոցիացիան տեսնում է իր դերն այս ծրագրում և իրացրել է այն մի քանի ասպեկտով՝

**ա.** Ծառայություններ մատուցողների և որոշումներ ընդունողների շրջանում իրազեկման աշխատանքներ, այնպես, որ կարևոր դերակատարները համաչափորեն տեղեկացված լինեն տեղի ունեցող ռեֆորմների վերաբերյալ և, ըստ այդմ, օգնել, որ նվազի դիմադրության այն չափաբաժինը, որը պայմանավորված է անիրազեկությամբ:

**բ.** Առանձին խորհրդատվություններ տրամադրել այն «դիմադրողներին», ովքեր հավատացած են, որ գործող համակարգը լավագույնն է, և փոփոխությունները



«Ներդաշնակ Հասարակություն» *Սոցիալական Աշխատողների Սոցիալիստ*

Թելադրված են որպես միջազգային կառույցի քնահաճություն կամ առիթ՝ ստանալու հերթական դրամաշնորհը:

**գ.** Բանավեճեր կազմակերպել ռեֆորմի կողմնակիցների և դիմադրողների միջև՝ օգնելով կողմերին պահպանելու երկխոսության ցիվիլ պայմանները:

Դժվար է ասել, թե բոլոր այս աշխատանքների արդյունքում որքանով է ավելացել կողմնակիցների թիվը, սակայն իրազեկված մարդկանց թիվը միանշանակ աճել է:

Ղեկավարներին աջակցելու նպատակով հանդիպումներ են կազմակերպվել նրանց և նրանց ղեկավարների հետ, Մակ-ի մանկական հիմնադրամի աջակցությամբ ստեղծվել են ուսուցողական նյութեր մայրենի լեզվով: Ներկայումս վարչության համապատասխան մասնագիտական աշխատանքային խումբը փորձում է ստեղծել աշխատանքի նկարագիր և կրթական, հմտությունների ու կարողությունների նվազագույն սանդղակի պահանջների փաթեթը, որպեսզի պաշտպանված լինեն առաջին հերթին շահառուները և իրենք՝ ղեկավարողները:

Կարևոր էմ համարում նշել, որ սա հսկայական ժամանակ, ջանքեր և ժամանակ պահանջող խնդիր է, որի լուծումն ավարտուն տեսքի կրերի ռեֆորմն, իսկ մասնագետները պատրաստ կլինեն աշխատելու նորովի պահանջներին համապատասխան: Ներկայումս քննարկումներ ենք կազմակերպում համալսարանի համապատասխան ամբիոնի հետ՝ կրթական չափորոշիչները վերանայելու:



«Ներդաշնակ Հասարակություն» Սոցիալական Աշխատողների Սոցիալիստական

**Այլ հարցեր.**

Միջազգային կապերի շրջանակներում շատ են ակտիվացել առնչությունները այլ ասոցիացիաների, մասնավորապես Վրաստանի, Ադրբեջանի, Բուլղարիայի, Ավստրիայի և Շվեյցարիայի հետ:

Վարչության համապատասխան խումբը պատրաստել է ծրագրային մոտ 5 առաջարկ՝ քույր ասոցիացիաների հետ իրականացնելու նպատակով: Դրանք պետք է ծառայեն փորձի փոխանակմանը, ասոցիացիայի ուժեղացմանը, անդամներին մատուցվող ծառայությունների հարստացմանը և մասնագիտության զարգացմանը: Մեծ ուշադրություն է դարձված կարողությունների զարգացմանը:

Անհրաժեշտ են համարում նշել, որ Բեռն քաղաքի սոցիալական աշխատանքի դպրոցում արդեն երրորդ անգամ անցկացրել են դասախոսություն ՀՀ-ում սոցիալական աշխատանքի դպրոցի կայացման մասին: Դա հնարավոր է դարձել շվեյցարական սոցիալական աշխատողների ասոցիացիայի հրավերով: Նմանատիպ հրավեր է ստացվել նաև Պորտուգալիայի և Վրաստանի ասոցիացիաներից: Ներկայումս բանակցություններ են ընթանում Անգլիայի ասոցիացիայի հետ: Անշուշտ նման գործունեությունը օգնում է ավելացնել կազմակերպության ճանաչելիությունը:

Կարևոր ձեռքբերում է նաև «Մասնակցություն և ներառում» թեմայով միջազգային ճամբարին ասոցիացիայի մասնագետների մասնակցությունը, որի շրջանակներում ՀՀ-ից 5 մասնագետ մասնակցել է Շվեյցարիայում կազմակերպվող՝ ժողովրդավարական արժեքների խթանմանը նպաստող ճամբարին:



## Դժվարություններ.

Ինչպես նախորդ հաշվետվության ժամանակ է զեկուցվել, կազմակերպության զարգացման և կայացման համար կարևոր հարց է անդամների կողմից անդամավճարների հարցի կարգավորումը: Նախորդ հաշվետու ժողովից հետո ընկած ժամանակահատվածում վարչության ներսում և առանձին անդամների հետ բազմաթիվ քննարկումներ և խորհրդատվություններ են կազմակերպվել: Եվս մեկ անգամ ներկայացնելով այս խնդիրը՝ լիահույս եմ, որ ժողովն այս անգամ վերջնական լուծում կտա այս չափազանց կարևոր խնդրին: Հարկ եմ համարում նշել, որ Նորվեգայի և Շվեդիայի սոցիալական աշխատողների ասոցիացիաների կողմից կատարված ժեստը՝ վճարել մեր ասոցիացիայի փոխարեն IFSW-ի անդամավճարը նախորդ 3 տարիների համար, մեծ օգնություն էր մեր ասոցիացիայի համար, սակայն մենք առաջիկայում այլևս չենք կարող հույս դնել դրա վրա: Ուստի այդ խնդրի լուծումը պատվի հարց է. այլապես ստիպված կլինենք ընդունել ռադիկալ որոշում՝ լքելու միջազգային ասոցիացիան, ինչը նշանակում է՝ կտրվել միջազգային մասնագիտական հանրությունից: Սա, միանշանակ, անցանկալի էլք է:

Շնորհակալություն ուշադրության համար:





"HARMONIC SOCIETY"  
ARMENIAN ASSOCIATION OF SOCIAL WORKERS  
«ՆԵՐՂԱԶՆԱԿ ԿԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ»  
ՄՈՏՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՅՅԱՆԻ ԱՄՈՏՏԱԿՈՒ

*“Harmonic Society” Armenian Association of  
Social Workers*

*«Ներդաշնակ Հասարակություն» Սոցիալական Աշխատողների Ասոցիացիա*

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

<http://en.aasw.org/wp-content/uploads/sites/4/2013/12/1.-standards-by-A5.pdf>

[http://en.aasw.org/wp-content/uploads/sites/4/2013/12/2.-etika\\_new\\_A5.pdf](http://en.aasw.org/wp-content/uploads/sites/4/2013/12/2.-etika_new_A5.pdf)

<http://en.aasw.org/wp-content/uploads/sites/4/2013/12/Astichanakargum.pdf>

[http://aasw.org/wp-content/uploads/2014/03/Summary\\_sections.pdf](http://aasw.org/wp-content/uploads/2014/03/Summary_sections.pdf)

Շնորհակալություն

«Ներդաշնակ հասարակություն» սոցիալական աշխատողների ասոցիացիայի  
նախագահ

Միրա Անտոնյան